

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ ՎԱՐԳԳԵՍԻ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2012

ԱԾԱՆՈՒՄ ԵՎ ԿՈՄՊԻՅԱՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ԱՆՔԻՆԻ ԲԻ ԱԾԱՆՈՒՄ ԵՎ ԿՈՄՊԻՅԱՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Ի ՆԻ ԱՐԻ Ի Ի ՆՈՒ ԵՎ ԿՈՄՊԻՅԱՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ
Ի ԾԱՆՈՒՄ ԵՎ ԿՈՄՊԻՅԱՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ԱՆՔԻՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Անքինի Կրիմինալոգիա և քրեակատարողական իրավունք
Ի Ն ԿՈՄՊԻՅԱՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

12.00.05. Օճի ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ ԵՎ ԿՈՄՊԻՅԱՆԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ԱԾԱՆՈՒՄ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Մ. Գրիգորյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր Ա. Գաբուզյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու Վ. Շահնազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հունիսի 8-ին, ժամը
14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՌՀ-ի իրավաբանության 001
մասնագիտական խորհրդի նիստում (0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012 թ. մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Институте философии,
социологии и права НАН РА

Научный руководитель: кандидат юридических наук,
äiäáí ò **Մ. Գրիգորյան**

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор А. Габузян
кандидат юридических
наук В. Шахназарян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 8-го июня 2012 г., в 14⁰⁰ часов на заседании специали-
зированной совета ВАК-а 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 8-го мая 2012 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А.Г. Вагаршян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:* Պետության՝ իրավակարգի պահպանության գործառույթը, որպես պետական գործունեության ձև, ուղղված է հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից նրա օրենսդրական ակտերի ճշգրիտ և անշեղ կատարումն ապահովելուն: Իրավական պետության մեջ, ուր պետական և հասարակական կյանքը կառուցվում է արդարացի օրենքների վրա՝ հասարակության, պետության, անհատի շահերը պահպանվում են ցանկացած անօրինական ոտնձգություններից: Պետության իրավապահ գործունեության կենտրոնում առաջին հերթին գտնվում է ինչպես անհատը՝ որպես քաղաքացի, հասարակության անդամ, ազատ անհատ, այնպես էլ պետությունն՝ իր տարբեր կառույցներով: Այդ իսկ պատճառով էլ պետությունը, պահպանելով անհատի օրինական շահերն ու իրավունքները, միաժամանակ պահպանում է նաև իր շահերը, ամբողջ հասարակության շահերը:

Պետության կողմից հրատարակված օրենքների պահպանման պահանջը ձևավորվել է վաղուց: Դեռևս հռոմեական իրավաբաններն էին խոսում օրենքների անվերապահ կատարման պահանջի մասին (*օրենքը խիստ է, բայց դա օրենք է՝ «dura lex, sed lex»*): Հռոմեական իրավունքի համակարգը, այդ ժամանակաշրջաններից սկսած, գույքային իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում հանդիսացավ օրինականության իրավաբանական բազան:

Քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում պետությունն իր օրենսդրական դաշտը ձևավորում է իրավունքի այնպիսի ճյուղերով, որոնք իրենց բազմազանությամբ կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունների տարբեր բնագավառներ՝ ըստ էության իրենց մեջ ներառելով *պահպանական (պաշտպանական) և կանխարգելիչ (կանխման) գործառույթներ*: Այս առումով քրեական իրավունքը, որպես հասարակության և պետության կողմից հանցագործություններին հակազդելու հիմնական միջոց, առաջացել է օրենքի սահմաններում իրեն հատուկ միջոցներով (հիմնականում՝ պատժի սպառնալիքով և դրա կիրառմամբ) անձին, հասարակությունը և պետությունը հանրորեն վտանգավոր, հանցավոր ոտնձգություններից պաշտպանելու նպատակով: Ինչպես նախկին՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1961թ. քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ ՀՍՍՀ 1961թ. քր. օր.), այնպես էլ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ ՀՀ քր. օր.), առաջին պլան են մղում հենց պաշտպանական խնդիրները: Ինչպես սահմանում է ՀՀ քր. օր.-ի 2-րդ հոդվածը՝ *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները...»:* Ինչպես երևում է

նշված օրենսդրական ձևակերպումից, պետության հիմնական գործունեության ուղղություններից մեկը՝ հանցավոր ոտնձգություններից *սեփականության պաշտպանությունն է*: Դա նաև սահմանադրական պահանջ է, քանի որ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը...»*: Սեփականության պաշտպանությունը պետության կողմից երաշխավորվում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացմամբ և հավասար իրավական պաշտպանվածությամբ, տնտեսական գործունեության ազատությամբ և ազատ տնտեսական մրցակցությամբ: Ինչպես նշում է պրոֆ. Ա. Բոյցովը՝ *«...Սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը ցանկացած պետության գործունեության պարտադիր բաղադրամասն է: Դրա համար նա պարտավոր է երաշխավորել սեփականության հարաբերությունների կայունությունը և պայմաններ ստեղծել դրանց պաշտպանության համար»¹*:

Պետության կողմից սեփականության պաշտպանության գործառույթի ստանձնումը իրականացվում է տարբեր միջոցներով և մեթոդներով, որոնց մեջ զգալի տեղ է հատկացվում քրեական իրավունքին: Այն կոչված է հանցավոր ոտնձգություններից քրեաիրավական պաշտպանության ներքո վերցնել սեփականությունը, հատկապես այնպիսի առավել տարածված և վտանգավոր ոտնձգություններից, ինչպիսիք են՝ *հափշտակությունները*:

«Հափշտակություն» եզրույթը, որպես համասեռ հանցագործությունների ընդհանրացված հասկացություն, առաջին անգամ կիրառվել է խորհրդային իշխանության օրենքներում, մասնավորապես՝ 1922 և 1926-1935թթ. քրեական օրենսդրություններում (1922թ. քր. օր.-ի «180-ա» հոդվածում), սակայն քրեական օրենսդրության մեջ այդ հասկացությունն իմաստավորվեց միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (այսուհետ՝ ԽՍՀՄ) Գերագույն Խորհրդի նախագահության 1947թ. հունիսի 4-ի *«Պետական և հանրային գույքի հափշտակության համար քրեական պատասխանատվության մասին»* հրամանագրով, որով այդ հասկացությունն ընդհանրացվեց և ներառեց հափշտակությունների բոլոր եղանակներն ու տեսակները: Հափշտակության հասկացությունը պաշտոնական ձևակերպում ստացավ ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1954թ. մայիսի 28-ի որոշման մեջ՝ *«Ըստ 1947թ.-ի հունիսի 4-ի հրամանագրի իմաստի՝ պետական և հանրային ունեցվածքը սեփականացնելը, անկախ դրա կատարման ձևերից և եղանակներից, պետք է դիտվի որպես հափշտակություն»*: Հետագայում հափշտակության հասկացությունը դարձյալ չհստակեցվեց: 1960-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ հանրապետությունների կողմից ընդունված քրեական օրենսգրքերում հստակեցված չէր այն հանցագործությունների շրջանակը, որոնք մտնում էին «հափշտակություն» հասկացության մեջ:

Ելնելով այն հանգամանքից, որ հափշտակությունների գործերով պրակտիկայում թույլ էին տրվում լուրջ սխալներ, ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը 1972թ. հուլիսի 11-ի *«Պետական և հանրային գույքի հափշտակությունների գործերով*

¹ Ст'я Бойцов А.И. Преступления против собственности, теория и практика уголовного права и уголовного процесса, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2002г., т.9

դատական պրակտիկայի մասին» որոշմամբ բավականին խորությամբ պարզաբանեց հափշտակությունների վերաբերյալ նորմերը: Սակայն հափշտակության ընդհանրական հասկացությունն այդպես էլ չտրվեց: Արդյունքը եղավ այն, որ ո՛չ նախկին, և ո՛չ էլ ներկայիս քրեական օրենսդրություններում հափշտակության բնորոշումը որևէ կերպ չտրվեց: Հափշտակության հասկացությունը՝ որպես գիտական կատեգորիա, նորից դարձավ տեսական քննարկման առարկա: Տարբեր ժամանակներում գիտնականների արտահայտած կարծիքները բնականաբար ազդում էին նաև հափշտակությունների որակման վրա, սակայն *հափշտակություններին վերաբերող նորմերի կիրառման պրակտիկան միասնական չէր*: Հափշտակության օրենսդրական բնորոշման բացակայությունը շատ քրեագետների կողմից նույնիսկ համարվեց քրեական օրենքի «*հայտնի բացթողում*»:

Ներկայումս նշված հասկացության բնորոշման վերաբերյալ առկա տարածայնությունները շարունակվում են, ինչը չի նպաստում հափշտակությունների դեմ տարվող պայքարի արդյունավետությանը:

Ինչպես հայտնի է, ՀՀ 1961թ. քր. օր.-ն իր կառուցվածքով որոշակի բարդություններ էր ներկայացնում այնպիսի հանցագործությունների քրեաիրավական որակման և գնահատման հարցում, ինչպիսիք են «*հափշտակությունները*»: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ գործող քր. օր.-ը փորձ է կատարել նորովի լուծելու գույքի հափշտակությունների հետ կապված քրեական պատասխանատվության հարցերը, դրանց որակման առանձնահատկությունները, ընդգրկել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների այնպիսի նոր հանցատեսակներ, ինչպիսիք են՝ առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությունը (հոդված 180-րդ), համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունը (հոդված 181-րդ) և այլն, կատարել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական նորմերի նոր համակարգում, վերադասավորում, նորմերի դիսպոզիցիաների բովանդակության որոշ փոփոխություններ և վերաձևակերպումներ, պատժաչափերի և պատժատեսակների, նորմի կառուցվածքային առանձնահատկությունների փոփոխություններ, այնուամենայնիվ, ՀՀ քր. օր.-ում դեռևս կան խնդիրներ, որոնք կարիք ունեն գիտականորեն հիմնավորված պարզաբանումների և վերլուծությունների: Վերջին տարիների ընթացքում հափշտակություններին վերաբերող մի շարք խնդիրներ քրեագետների կողմից հնարավորինս ենթարկվել են լուսաբանման, չնայած այն հանգամանքին, որ դատական պրակտիկայում դեռևս հանդիպում են դժվարություններ և տարակարծություններ՝ կապված հափշտակությունների ոչ ճիշտ որակման և հարակից հանցագործություններից դրանք սահմանազատելու հետ:

Ըստ արժանավայել գնահատելով ՀՀ Սահմանադրության և ՀՀ քր. օր.-ի ժողովրդավարական ուղղվածությունը՝ պետք է նշել, որ քրեական օրենսդրության մեջ այդքան կարճ ժամանակի ընթացքում չէին կարող ամբողջովին իրացվել իրավական պետությունների բոլոր ժողովրդավարական նվաճումները: Այդ գործընթացը, անկասկած, պահանջում է ավելի երկար ժամանակ, որի ընթացքում պետք է անցկացվեն հիմնարար գիտական ուսումնասիրություններ և վերլուծվի քրեական օրենսգրքի կիրառման պրակտիկան: Հայաստանի արդի քրեական օրենսդրության

հաջող բարեփոխումը, ուսումնասիրությունը և զարգացումը, օբյեկտիվորեն անհնարին է նաև առանց դրա պատմական արժանատիքի իմացության և օգտագործման: Միայն անցյալի և ներկայի կապի ու համեմատության արդյունքում է հնարավոր ավելի խոր ու բազմակողմանի իմաստավորել քրեական օրենսդրության և դրա ինստիտուտների նշանակությունն ու արդիականությունը:

Հիմնվելով տարբեր ժամանակների դատական պրակտիկայի և քրեական իրավունքի տեսության հիմնադրույթների վրա, ատենախոսության մեջ ներկայացվում են՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը, հափշտակությունների տարատեսակ քրեաիրավական բնորոշումները, հափշտակության տարբերն ու հատկանիշները, հափշտակությունների եղանակները, տեսակները, դրանց օրենսդրական ձևակերպումները, նախորդ քրեական օրենսդրությունների և գործող քրեական օրենսդրության համապատասխան նորմերի օրենսդրական համեմատական վերլուծությունները, հափշտակությունների օրենսդրական սահմանազատումը այնպիսի հարակից հանցագործություններից, որոնք թեև իրենց մեջ պարունակում են հափշտակության հատկանիշներ, սակայն գտնվում են այլ քրեաիրավական նորմերի պաշտպանվածության ներքո, ինչպես նաև հափշտակությունների որակման, քրեական օրենսդրության ճշգրիտ կիրառման տարատեսակ հարաբերությունները: Նշված հարցերի շոշափման ուրույն շրջանակով էլ պայմանավորված է ուսումնասիրության թեմայի արդիականությունը:

Թեմայի ուսումնասիրության վիճակը: Անվիճելի է, որ թեմային առնչվող մի շարք հարցեր բուռն քննարկման առարկա են դարձել քրեական իրավունքի տեսության մեջ և արժանացել տարաբնույթ մեկնաբանությունների: Հափշտակություններին և դրա որակման առանձնահատկություններին վերաբերող հարցը դեռևս համալիր քննարկման չի ենթարկվել ՀՀ-ում, չնայած որ տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակների, մասնավորապես՝ Ի.Ա. Բոյցովի, Մ.Ի. Բաժանովի, Բ.Ա. Վլադիմիրովի, Լ.Դ. Գաուխմանի, Ս.Վ. Մակսիմովի, Մ.Վ. Սերովի, Վ.Ի. Կոմիսսարովի, Ե.Ս. Լապինի, Ն.Դ. Դուրմանովի, Վ.Վ. Երակսինի, Վ.Ա. Չոտովի, Բ.Դ. Չավիդովի, Ս.Մ. Կաչոյի, Գ.Ա. Կրիզերի, Պ.Ս. Յանիի, Մ.Մ. Իսակի, Ի.Մ. Մակարի, Ա.Ա. Պինակի, Վ.Ն. Սաֆոնովի, Յու.Մ. Տկաչևսկու, Ն.Գ. Շուրուխնովի, Ս.Յա. Բուլատովայի, Ա.Ա. Ֆիլիմոնովայի և այլոց կողմից, այս խնդրին մվիրված եղել են առանձին գիտական հետազոտություններ: Այնուհանդերձ, որոշ քրեաիրավական, հատկապես օրենսդրական լուծումներ, կյանքի են կոչվել՝ կապված ՀՀ քր. օր.-ի, հափշտակություններին վերաբերող հարցերի, ինչպես նաև՝ թեմային վերաբերող տարբեր օրենսդրական նախաձեռնությունների հետ:

Առավել հանգամանալի քննարկման առարկա են դարձել սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, դրանցում ինքնուրույն նշանակություն ստացած՝ հափշտակությունների բնորոշման, հափշտակության առանձին եղանակներին, տեսակներին, հափշտակության հատկանիշներին, քրեաիրավական հասկացություններին ու վերլուծություններին, ինչպես նաև՝ ուսումնասիրության առարկային այս կամ այն չափով առնչվող մի շարք այլ խնդիրներին վերաբերող ուսումնասիրությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ քր. օր.-ում հափշտակության հատկանիշներ պարունակող հանցակազմերն են և դրանց քրեաիրավական որակման հետ կապված առանձնահատկությունները: Հետազոտության առարկան են հանդիսանում հափշտակության հասկացությանը և էությանը վերաբերող հիմնախնդիրները, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների մեջ ընդգրկված հափշտակության առանձին եղանակների ու տեսակների կառուցվածքը, դրանց ուսումնասիրությունը, համեմատական վերլուծությունները և որակման պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը ՀՀ քր. օր.-ի շրջանակներում հափշտակության հասկացության և դրա քրեաիրավական որակմանն առնչվող հիմնադրույթների ուսումնասիրությունն է՝ տարբեր հեղինակների կարծիքների, իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տարաբնույթ տեսակետների, ինչպես նաև՝ հայրենական և արտասահմանյան դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա: Մասնավորապես, հեղինակն իր առջև նպատակ է դրել ՀՀ քր. օր.-ը մի շարք այլ երկրների քր. օր.-երի հետ համադրելով, ինչպես նաև գիտական գրականությունը և կուտակված փորձը օգտագործելով՝ վեր հանել հափշտակություններին վերաբերող գործերում տեղ գտած բացթողումները և հանդես գալ օրենսդրական առաջարկություններով, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա առավելագույնս հասնել հափշտակության գործերով դատական պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը և սեփականության դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող օրենսդրության հստակ և բազմակողմանի կարգավորմանը:

Ելնելով վերոնշվածից՝ հետազոտության հիմնական խնդիրներն են՝

- վերլուծել սեփականության դեմ ուղղված հանցագործությունները,
- բացահայտել և վերլուծել հափշտակության էությունը, հասկացությունը, հանցակազմի հիմնական տարրերն ու հատկանիշները, ինչպես նաև դրանց նշանակությունն արարքի որակման համար,
- կոնկրետ հանցակազմերի շրջանակներում վերլուծել հափշտակության առանձին եղանակների ու տեսակների քրեաիրավական առանձնահատկությունները,
- բացահայտել քրեական օրենսդրության մեջ առկա բացերը և համեմատական վերլուծություններ կատարել արտասահմանյան երկրներում գործող օրենսդրությունների հետ,
- առաջարկություններ մշակել հափշտակությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի համակարգման և կատարելագործման ուղղությամբ:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հանդիսանում է ՀՀ-ում առաջին մենագիր աշխատանքը, որտեղ փորձ է կատարվել բացահայտելու *«հափշտակության»*, որպես քրեաիրավական հասկացության, էությունը: Դրանում բազմակողմանի ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել հափշտակության հասկացությունը, այն բնորոշող հատկանիշները, հափշտակությունների կոնկրետ եղանակները, տեսակները, հափշտակության յուրաքանչյուր եղանակի հատկանիշները, վեր են հանվել դրանց

միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները, որն էլ իր հերթին նպաստել է մի շարք նոր հիմնախնդիրների լուծմանը: Ատենախոսության թեմային վերաբերող մի շարք հիմնահարցեր նորովի վերախմաստավորվել և հիմնովին լրամշակվել են, դրանց վերաբերյալ առաջարկվել են արմատապես նոր մոտեցումներ:

Պաշտպանության ներկայավող հիմնական դրույթները: Ատենախոսության գիտական նորույթն առարկայանում է պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

1. ՀՀ քր. օր.-ում հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող քրեախրավական բոլոր նորմերն առավել համակարգված, կենտրոնացված և քրեախրավական տեսանկյունից առավել միասնական և պրակտիկ դարձնելու նպատակով, *առաջարկվում է՝*

ա) ՀՀ քր. օր.-ում նախատեսել հափշտակություններին վերաբերող առանձին գլուխ, որն իր մեջ կներառի ՀՀ քր. օր.-ի տարբեր գլուխներում ընդգրկված հափշտակության հատկանիշներ պարունակող բոլոր հանցակազմերը:

բ) ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, առանձին ծանոթագրության տեսքով, սահմանել *«հափշտակություն»* հասկացությունը՝ հետևյալ ձևակերպմամբ.

«Սույն օրենսգրքի հողվածներում հափշտակություն ասելով հասկացվում է՝ հանցավորի կողմից ուրիշին (սեփականատիրոջը կամ գույքի օրինական տիրապետողին) պատկանող գույքը շահադիտական նպատակով, սպորինի, անհատույց վերցնելը և (կամ) այն իրենը կամ այլ անձինը դարձնելը, եթե նա իրական հնարավորություն է ունեցել իր հայեցողությամբ այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու»:

2. Ընդհանրացնելով իրավաբանական գրականության մեջ ավազակության և կողոպուտի հանցակազմերի միավորման խնդրի շուրջ առկա հիմնավորումները և այն, որ նշված հանցակազմերի միավորումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քր. օր.-ի և նրա հետագա կատարելագործման համար, ինչպես նաև նկատի ունենալով այս հարցի շուրջ տարբեր երկրների քրեական օրենսդրությունների ունեցած պրակտիկան, առաջարկվում է՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում ընդգրկված ավազակության (ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդված) և բռնությամբ զուգորդված կողոպուտի (ՀՀ քր. օր.-ի 176-րդ հոդված) հանցակազմերը միավորելով՝ ստեղծել *ավազակության միասնական հանցակազմ*, իսկ ավազակության հանցակազմը բնորոշող օրենսդրական սահմանումը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. *«Ավազակությունը՝ ուրիշի գույքի հափշտակությունն է, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով»:* Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նմանատիպ բնորոշման արդյունքում ավազակության հանցակազմից դուրս է մնում կողոպուտի հասարակ տեսակը, այն է՝ *ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը*, ուստի առաջարկվում է՝ կողոպուտի հանցակազմի հասարակ տեսակը ընդգրկել գողության հանցակազմում (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդված)

և այն բնորոշել հետևյալ բովանդակությամբ՝ «Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի կամ բացահայտ հափշտակությունը, որը կատարվել է մանր չափերով...»:

3. Վերացնել համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմը (հոդված 181-րդ), իսկ դրա փոխարեն ավագակության, գողության, խարդախության և յուրացնելու կամ վատնելու հանցակազմերում ավելացնել արարքը որակյալ դարձնող հետևյալ հատկանիշը՝ «...որը կատարվել է համակարգչային տեղեկատվության համակարգ ապօրինի (չարտոնված) մուտք գործելով»: Վերը նշված հոդվածի վերացման հետ միաժամանակ, ՀՀ քր. օր.-ում՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, նախատեսել քրեաիրավական նորմեր այնպիսի հանցավոր ոտնձգությունների համար, ինչպիսիք են՝ «Ֆրիկերությունը» և «ռադիոհեռությունը», ընդ որում՝ պատասխանատվությունը նախատեսել ոչ թե հանրորեն վտանգավոր հետևանքների, այլ այն փաստացի արարքների համար, որոնք կարող են վնաս պատճառել ինչպես ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի, այնպես էլ՝ պետությանը²:

4. «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ համապատասխան ծանոթագրության կամ առանձին հոդվածի տեսքով, սահմանել հափշտակության առարկայի՝ «գույքի», ինչպես նաև՝ «շինության», «պահեստարանի», որոշակի խմբագրմամբ նաև՝ «բնակարանի», և «տեխնիկական միջոցների» քրեաիրավական հասկացությունները, մասնավորապես՝

ա) «Սույն գլխում նախատեսված հոդվածներում, գույք են համարվում ցանկացած տեսքով արտահայտված (այդ թվում՝ հանրորեն օգտակար աշխատանքի արդյունքում ստեղծված կամ արտադրված) այն սպրանքանյութական արժեք ներկայացնող օբյեկտները, որոնք ունեն որոշակի զին և փոխանակման արժեք: Գույք են համարվում նաև՝ փողը, արժեթղթերը, վճարման պլաստիկ քարտերը, ինչպես նաև էլեկտրական կամ ջերմային էներգիան, գազը և ջուրը»,

բ) «Սույն գլխում նախատեսված հոդվածներում, շինություն է համարվում մարդկանց կամ նյութական միջոցների գտնվելու համար նախատեսված մշտական կամ ժամանակավոր բնույթ կրող կառույցը»,

գ) «Սույն գլխում նախատեսված հոդվածներում, պահեստարան է համարվում գույքը հափշտակությունից, ոչնչացումից, վնասումից կամ փչացումից ապահովող և մշտապես կամ ժամանակավորապես պահպանելու նպատակով պատրաստված հատուկ կառույցը (կամ՝ հատկապես առանձնացված տարածքը)»,

դ) «Սույն օրենսգրքով նախատեսված հոդվածներում, բնակարան է համարվում փաստացի բնակության համար նախատեսված որոշակի անձի կամ անձանց կողմից մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվող բնակելի տարածքը»,

² Այս երկու հասկացությունները կարելի է հակիրճ բնորոշել հետևյալ կերպ. «Ֆրիկերությունը»՝ հեռախոսային ցանցը ապօրինի մուտք գործելն է, իսկ «ռադիոհեռությունը»՝ ռադիոհաճախականությունների տիրույթ ապօրինի մուտք գործելը:

ե) *«Մույն գլխում նախատեսված հոդվածներում, տեխնիկական միջոցներ են համարվում հանցագործության խոչընդոտները վերացնելու (հաղթահարելու) համար օգտագործվող ցանկացած տեսակի նյութական միջոցները»:*

5. Շորթման հանցակազմն ամբողջությամբ ընդգրկել հափշտակությունների մեջ՝ որպես հափշտակության *հավասարազոր և ինքնուրույն եղանակ*, իսկ գույքային բնույթի գործողությունների կատարման պահանջը, որը համարվում է շորթման հանցակազմի պարտադիր հատկանիշներից մեկը, դիտել որպես առանձին հանցագործություն՝ դրա համար նախատեսելով առանձին քրեաիրավական նորմ՝ *«Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»* գլխում: Եթե շորթման ժամանակ հանցավորի վերջնական նպատակը արտահայտվում է գույքն իրենը դարձնելուն ուղղված գործողություններով, ապա ինչպես ավազակության, այնպես էլ շորթման ժամանակ, այն դիտարկվում է որպես *գույքին տիրանալուն ուղղված եղանակ* և ավարտաված է համարվում փաստացի սպառնալիքը արտահայտելու պահից սկսած:

6. Նկատի ունենալով այն, որ հափշտակությամբ գույքը վերցնելու ընթացքում հանցավորը կարող է գործադրել տարաբնույթ տեխնիկական միջոցներ, որոնց առկայության փաստը բարձրացնում է վերջինիս կատարած գործողությունների հանրային վտանգավորությունը և միաժամանակ կարող է գուցորդված լինել նաև գույքի սեփականատիրոջը տարբեր չափերի գույքային (նյութական) վնաս պատճառելու հանգամանքով, առաջարկվում է՝ տեխնիկական միջոցների գործադրման հատկանիշը, որպես հափշտակության հանցակազմերում արարքի հանրային վտանգավորությունը բարձրացնող հատկանիշ, ընդգրկել ՀՀ քր. օր.-ի *«Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»* գլխում՝ ավազակության և գողության հոդվածներում՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ:

7. ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի (ավազակություն) 4-րդ մասի ծանոթագրության մեջ, որը վերաբերում է նաև հանցագործությամբ պատճառված վնասի չափերին, ավելացնել հետևյալ նախադասությունը՝ *«...բացի հանցագործությամբ պատճառված վնասից, կարող են հաշվի առնվել նաև գործի այլ էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ անձի ֆինանսական կամ նյութական դրությունը, անձի համար հափշտակված գույքի նշանակությունը»:*

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հենքը և նորմատիվ-իրավական բազան: Կատարված ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են վիճակագրական, համակարգակառուցվածքային, համեմատական, պատմա-համեմատական, կառուցվածքային-վերլուծական և մի շարք այլ մեթոդներ:

Աշխատանքի տեսական բազան են հանդիսանում սահմանադրական, քրեական, քաղաքացիական իրավունքի հիմնախնդիրների վերաբերյալ գրականությունը, ինչպես նաև թեմային վերաբերող տարբեր նորմատիվ իրավական ակտերը: Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել նաև սեփականության իրավունքի ուսումնասիրությանը նվիրված իրավագիտության տեսության դասական մոտեցումները, սեփականության իրավունքին և դրա հիմքում ձևավորված հափշտակության հիմնահարցերին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը: Ատենախոսության հիմքում ընկած են՝ Ա.Ա.

Թամազյանի, Գ.Ս. Ղազինյանի, Մ.Վ. Գրիգորյանի, Վ.Գ. Ավետիսյանի, Տ.Կ. Բարսեղյանի, Ա.Ա. Պինակի, Բ.Գ. Չավիդովի, Գ.Ա. Կրիգերի, Լ.Գ. Գառլիսյանի, Ս.Վ. Մաքսիմովի, Ս.Մ. Կաչոյի, Ս.Յա. Բուլատովի, Բ.Ս. Վոլկովի, Վ.Ն. Սաֆոնովի, Մ.Մ. Իսակի, Ա.Ի. Բոյցովի, Վ.Ե. Կոզլովի, Պ.Ս. Յանիի, Վ.Ս. Լեբեդևի, Հեգելի և այլոց աշխատությունները, որոնք տեսական հիմք են ստեղծել սույն աշխատության համար: Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ հիմնականում շեշտը դրվել է հափշտակության, որպես գիտական կատեգորիայի, առանձին կողմերի ուսումնասիրությանը, ինչը ժամանակի ընթացում չի վերացրել նշված հիմնահարցի վերաբերյալ համալիր վերլուծության միջոցով նոր տեսական ընդհանրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության նորմատիվային հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀԽՍՀ և ՀՀ քրեական օրենսդրությունները, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը, ՀՀ դատական օրենսդրությունը, ԱՊՀ երկրների և մի շարք այլ եվրոպական երկրների քրեական օրենսդրությունները, ինչպես նաև՝ մի շարք այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հետազոտության արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ աշխատանքի մեջ փորձ է արվել համալիր կերպով քննարկելու հափշտակությանը վերաբերող խնդիրների քրեաիրավական կարգավորման հիմնահարցերը: Արդյունքների նշանակությունը պայմանավորված է ներկայացվող խնդրի նորույթով, հետազոտության առարկայի նկատմամբ քննադատական մոտեցմամբ և մի շարք կոնկրետ խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններով: Կատարված հետազոտությունները և դրանց արդյունքները կարող են օգտակար լինել դիտարկվող հիմնախնդիրներով զբաղվող գիտնականների, դասախոսների և ուսանողների համար: Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել գիտահետազոտական աշխատություններում:

Աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ կատարված վերլուծությունները, մասնավորապես՝ «հափշտակություն» հասկացության օրենսդրական բնորոշումը, սեփականությանը վերաբերող քրեաիրավական նորմերի օրենսդրական կառուցվածքային փոփոխությունները, որոշ քրեաիրավական նորմերի բովանդակային վերաձևակերպումները, ինչպես նաև նշված հիմնախնդիրներին վերաբերող մշակված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր մարմնի կողմից հափշտակության քրեաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերի մշակման և ընդունման, իրավապահ մարմինների կողմից հափշտակություններին վերաբերող քրեաիրավական նորմերի կիրառման գործում: Մշակված առաջարկությունները կարող են օգտակար լինել նաև ՀՀ քր. օր.-ի բարեփոխումների իրականացման ընթացքում:

Հետազոտության փորձառնական (ենպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմում 2000-2010 թվականներին ՀՀ-ում գրանցված հափշտակությունների վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի և ՀՀ վիճակագրական տարեգրքի պաշտոնական վիճակագրական տվյալները, 1999-

2009 թվականերին ՀՀ դատարանների կողմից Երևան քաղաքում և մարզերում քննված, ինչպես նաև ՀՀ դատաքննչական մարմինների արխիվներում պահվող շուրջ 150 քրեական գործերի ուսումնասիրության արդյունքները:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել և գրախոսվել են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, հինգ պարագրաֆներից, ամփոփիչ մասից, հավելվածից ու օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, որոշակիացվում են հետազոտման նպատակներն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ցույց է տրվում ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գործնական-կիրառական նշանակությունը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխը՝ «Հափշտակությունների հասկացությունը, քրեաիրավական բնութագիրը և որակման ընդհանուր պայմանները», բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը» պարագրաֆում ատենախոսի կողմից ուսումնասիրության են ենթարկվել սեփականության պատմությունը, հասկացությունը՝ որպես իրավական և տնտեսական կատեգորիա, սեփականության դրսևորման ձևերն ու տեսակները, օրենսդրական հիմքերը:

Ատենախոսը նշում է, որ սեփականությունը հանդիսանալով տնտեսական կատեգորիա, առաջացել է մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց և անցել է երկարատև պատմական ուղի: Սեփականությանը վերաբերող ուսմունքի ձևավորման գործում ատենախոսն հատկապես կարևոր նշանակություն է տալիս Հեգելի փիլիսոփայական ուսմունքին, որը կարևորելով սեփականության էությունը, ինչպես նաև գույքի նկատմամբ ունեցած իրավունքները, նշում է՝ «Ես կարող եմ օտարել իմ սեփականությունը, քանի որ այն իմն է այնքանով, որքանով նրա մեջ իմ կամքն է արտահայտված»³:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ դեռևս անտիկ դարաշրջանի իրավունքում չկար սեփականությանը վերաբերող որևէ հատուկ եզրույթ: Առավել հինը «dominium» եզրույթն է («domare» բայից՝ «զսպել», «նվաճել»), որը նշանակում էր «գերիշխել» և կիրառվում էր այն դեպքերում, երբ ինչ-որ առարկա գտնվում էր որևէ մեկի իշխանության ներքո: Սեփականության հարաբերությունների հնագույն բնույթը

³ Տե՛ս *Կ. Գեգել* *Փիլոսոփիա արևմտյան, տոմ 113, Գերմանիայի ակադեմիա և Գերմանական ակադեմիա, 1990 թ., էջ 121*

ընդունվում է նաև այն հանգամանքով, որ Հին Հռոմում սեփականության իրավունք կրողը հնարավորություն ուներ համակողմանի օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը և բացառում էր այլ անձանց գերիշխումն իր գույքի նկատմամբ, որն արդեն Հուստինիանոսի իրավունքում նշանակում էր՝ **«գույքի նկատմամբ ունեցած լրիվ իշխանություն»** (plena in re potestas)»:

Սեփականության հարցերին անդրադառնալիս, ատենախոսը նախ և առաջ կարևորում է սեփականության, որպես տնտեսական հարաբերությունների էության պարզաբանումը, և դրանից ելնելով, պարզաբանում սեփականությունը՝ որպես իրավունք: Սեփականությունը որպես տնտեսական կատեգորիա ուսումնասիրելիս, հեղինակը հիմք է ընդունում այն իրողությունը, որ սեփականությունը իրը կամ գույքը չէ, և ոչ էլ մարդու հարաբերությունը դրանց հետ: Սեփականության տնտեսական հարաբերությունները՝ նյութական բարիքների կապակցությամբ մարդկանց միջև առաջացող հասարակական-տնտեսական հարաբերություններն են:

Սեփականությունից, որպես տնտեսական կատեգորիայից, պետք է տարբերել **սեփականության իրավունքը**, որով սեփականության տնտեսական հարաբերությունները ստանում են իրենց իրավական արտահայտությունը և ամրապնդումը: Սեփականության իրավունքի դերն այն է, որ ամրապնդի տվյալ հասարակությունում գոյություն ունեցող սեփականության տնտեսական հարաբերությունները: Պետությունը պաշտպանում է սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրին պարտավորեցնելով չխոչընդոտել սեփականատիրոջ իրավունքների իրականացմանը: Ոչ ոք իրավունք չունի ոտնձգելու սեփականության սուբյեկտիվ իրավունքի դեմ: Այսինքն՝ բոլոր անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք կարող են խախտել այլոց սեփականության իրավունքը: Այն, որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա, միշտ կապված է առարկաների (գույքի) հետ և նյութականացվում է դրանց մեջ: Սեփականության իրավունքը՝ **գույքային իրավունք է**: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հափշտակությունները դասվում են, այսպես կոչված, **«առարկայական հանցագործություններին»**, որոնք հաճախ անվանվում են նաև՝ **«գույքային»**: Դրանք արտահայտվում են քրեական հակաօրինականություն պարունակող այնպիսի հանցավոր գործողություններով, որոնք հանցավորի կողմից դրսևորվում են նյութական աշխարհի առարկաներին տիրանալու, դրանք վերցնելու, իր կամ այլ անձանց օգտին դարձնելու միջոցով:

Սեփականության իրավունքի հասկացության և բովանդակության օրենսդրական բնորոշումը տված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, ըստ որի՝ **սեփականության իրավունքը** սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ **տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու** իրեն պատկանող գույքը:

Արարքի հասարակական վտանգավորությունը ճիշտ գնահատելու և այն որակելու համար մեծ նշանակություն ունի հանցագործության կոնկրետ օբյեկտի՝ այն սոցիալական արժեքի ճշտագրումը, որի նկատմամբ ոտնձգում է տվյալ հանցագործությունը:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տեսակային օբյեկտը **սեփականությունն է՝** անկախ դրա ձևից և հարաբերությունից:

Պարագրաֆի վերջում հեղինակը, նկատի ունենալով ՀՀ քր. օր-ի 19-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջները, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, ենթարկել է համապատասխան դասակարգման:

Առաջին գլխի երկրորդ՝ «Հափշտակությունների բնորոշումը» պարագրաֆում ատենախոսի կողմից հանգամանորեն ուսումնասիրության են ենթարկվել հափշտակության էությունը, այն բնորոշող հատկանիշների առանձնահատկությունները, հափշտակության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տարբեր սահմանումները, տարբեր հեղինակների կողմից արտահայտած կարծիքները, դրա օրենսդրական ամրագրման անհրաժեշտության մասին հիմնավորումները, իսկ վերջում, ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները, առաջարկվում է՝ ՀՀ քր. օր.-ում (առանձին ծանոթագրության տեսքով) սահմանել «հափշտակության» օրենսդրական հասկացությունը և հափշտակություններին վերաբերող առանձին գլուխ նախատեսելու անհրաժեշտությունը:

Մասնավորապես նշվում է, որ «**հափշտակություն**» հասկացությունը տասնամյակներ շարունակ եղել է քրեական իրավունքի ամենավիճելի հարցերից մեկը: Դրա վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում տրվել են տարբեր բնորոշումներ, սակայն ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս քրեական օրենսդրություններից և ոչ մեկում հափշտակությունների վերաբերյալ հատուկ օրենսդրական բնորոշում չի եղել: Հափշտակությունների բնորոշման վերաբերյալ միասնական մոտեցում չկա նաև իրավաբանական գրականության մեջ: Դեռևս 40-ից 50-ական թվականներին տեսության մեջ ակտիվորեն քննարկվում էին ոչ միայն հափշտակությունների սուբյեկտիվ, այլ նաև օբյեկտիվ հատկանիշներին վերաբերող հիմնահարցերը:

Հեղինակը նկատել է, որ հափշտակության օրենսդրական բնորոշումն ունի ինչպես տեսական, այնպես էլ՝ կարևոր գործնական նշանակություն. այն կարող է նպաստել քրեաիրավական նորմերի ճիշտ և արդյունավետ կիրառությանը և օգտակար լինել քրեական օրենսդրության հետագա կատարելագործման համար: Հափշտակությունների հասկացության հստակ սահմանումը կարող է նաև կարևոր նշանակություն ունենալ ինչպես հանցագործության էությունը պարզաբանելու, ճիշտ որակելու, հափշտակությունները այլ հանցագործություններից սահմանազատելու, այնպես էլ՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ իրականացվող պայքարն արդյունավետ կազմակերպելու համար:

Հեղինակը գտնում է, որ հափշտակությունների ընդհանուր բնորոշումը տալու նպատակով պետք է նախ և առաջ հաշվի առնել նախկին քրեական օրենսդրություններով հափշտակությունների դեմ տարված պայքարի ուղղությամբ կուտակված փորձը, ինչպես նաև՝ այդ ժամանակաընթացքում քրեական իրավունքում և դատական պրակտիկայում հափշտակությունների վերաբերյալ տրված հասկացությունները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հափշտակությունների և

դրանց առանձին հատկանիշների հասկացությունը, որը տրված է նախկին օրենսդրությունների հիման վրա, *չի կարող մեխանիկորեն վերարտադրվել ներկա ժամանակում*: Իր համակցության և հիմնական հատկանիշների մեջ մնալով անփոփոխ՝ գույքի հափշտակության դրսևորումները կրել են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ նեղացել է այն հանցավոր արարքների շրջանակը, որոնք կարող են ընդգրկվել այդ խմբի հանցագործությունների մեջ: Բնական է, որ քրեական օրենսդրությունում նմանատիպ փոփոխությունները չեն կարող չանդրադառնալ գույքի հափշտակության ընդհանուր հասկացության վրա:

Հափշտակության բնորոշման մեջ պետք է ընդգրկվեն այն հատկանիշները, որոնք ընդհանրական են հափշտակությունների բոլոր եղանակների ու տեսակների համար և սահմանազատում են հափշտակությունները այլ տեսակի հանցագործություններից:

Ատենախոսի կողմից կատարած տարաբնույթ վերլուծությունները թույլ են տվել թվարկելու «հափշտակություն» հասկացության պարտադիր հատկանիշները, ինչպես նաև տալու հափշտակության ամբողջական սահմանումը: Ատենախոսն առաջարկում է հափշտակության հետևյալ սահմանումը՝

«Սույն օրենսգրքի հոդվածներում հափշտակություն ասելով հասկացվում է՝ հանցավորի կողմից ուրիշին (սեփականատիրոջը կամ գույքի օրինական տիրապետողին) պատկանող գույքը շահադիտական նպատակով, ասյօրինի, անհատույց վերցնելը և (կամ) այն իրենը կամ այլ անձինը դարձնելը, եթե նա իրական հնարավորություն է ունեցել իր հայեցողությամբ այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու»:

Առաջին գլխի երրորդ՝ «Հափշտակության հանցակազմի տարրերն ու հատկանիշները, դրանց նշանակությունն արարքի որակման համար» պարագրաֆում ատենախոսի կողմից ուսումնասիրվում են հափշտակության հանցակազմի այն առանձին տարրերն ու հատկանիշները (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ), որոնք կարևոր նշանակություն ունեն արարքի քրեաիրավական որակման գործում:

Եթե հափշտակությունը ձևակերպենք որպես՝ «*գույքի հակաօրինական վերցնելը պետական կամ հանրային ֆոնդերից*», ապա որպես այդպիսի հանցագործություն կարելի է ընդունել գույքը վերցնելու ցանկացած փաստը: Դա է պատճառը, որ նյութական բարիքների բաշխման հարաբերություններին վնաս պատճառող արարքի բնորոշման համար կիրառվում է մեկ այլ եզրույթ ևս, այն է՝ «*դարձնելը*»: Դա կարևորվում է նրանով, որ նշված եզրույթները, մեկը մյուսին լրացնելով, նեղացնում են իրենց իմաստային նշանակությունը հափշտակության շրջանակներում:

«Հափշտակություն» հասկացության առանձին բնորոշումներից պարզ է դառնում, որ այս հանցագործությունը, որպես շահադիտական նպատակով իրականացված արարք, կարող է կատարվել միայն *ուղղակի դիտավորությամբ*: Հետևաբար, գույքն անգգուշությամբ վերցնելը կամ դրան տիրանալը չի կարող հափշտակության հանցակազմ առաջացնել:

Հափշտակությունը համարվում է ավարտված հանցագործություն սկսած այն պահից, երբ հանցավորը փաստացի տիրանալով գույքին, իրական հնարավորություն է ստանում այն տնօրինելու և, որպես իր սեփականությունը հանդիսացող գույք, իր

հայեցողությամբ օգտագործելու: Հափշտակված գույքն օգտագործելու և տնօրինելու իրական հնարավորության բացակայության դեպքում բացակայում է նաև հափշտակության ավարտված հանցակազմի առկայությունը: Տվյալ դեպքում հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես ուրիշի գույքի հափշտակության հանցավորձ:

Երկրորդ գլուխը՝ «Հափշտակությունների առանձին եղանակների ու տեսակների քրեաիրավական ընդհանուր բնութագիրն ու որակման առանձնահատկությունները», բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Հափշտակությունների առանձին եղանակների քրեաիրավական ընդհանուր բնութագիրն ու որակման առանձնահատկությունները» պարագրաֆում** ուսումնասիրության են ենթարկվում հափշտակությունների կոնկրետ եղանակները (*գողություն, կողոպուտ, ավազակություն, խարդախություն, յուրացում կամ վատնում*), հափշտակության յուրաքանչյուր եղանակի հատկանիշները, դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ատենախոսը մի շարք հիմնահարցեր նորովի վերաիմաստավորել է և դրանց վերաբերյալ առաջարկել արմատապես նոր մոտեցումներ: Մասնավորապես՝ ատենախոսը գտնում է, որ դատական պրակտիկայում երբեմն հանդիպում են իրավիճակներ, որոնք առաջանում են ավազակության և բռնությամբ զուգորդված կողոպուտի դեպքերը միմյանցից սահմանազատելու և քրեաիրավական ճիշտ գնահատականը տալու հարցերի շուրջ: Այս իրողությունը իրավաբանական գրականության մեջ բացատրվում է նրանով, որ քրեական օրենսդրության մեջ դեռևս իրենց վերջնական օրենսդրական լուծումները չեն ստացել այնպիսի հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ինչպիսիք են՝ ավազակության և բռնությամբ զուգորդված կողոպուտի հանցակազմերը որպես մեկ միասնական հանցակազմ նախատեսելը:

Եթե քրեական օրենսդրության կատարելագործման գործընթացը կրնա աջակցել, որ հնարավոր կլինի ձևավորել ավազակության միասնական հանցակազմ, ապա պատասխանատվության հարցը պետք է որոշվի՝ կապված այն բանից, թե գույքը հափշտակելու ժամանակ կիրառվել է իրական ֆիզիկական բռնություն, թե՛ միայն բռնություն: Բռնության բաժանումը ըստ ինտենսիվության՝ հիմնականում պայամանավորված է բռնությամբ զուգորդված կողոպուտը ավազակության հանցակազմից տարանջատելու հանգամանքով: Օրենսդիրի այն դիրքորոշումը, թե բռնությունը՝ ըստ կյանքի կամ առողջության համար ունեցած վտանգավորության աստիճանի, բաժանվում է տեսակների, պրակտիկայում չի գործում, քանի որ բռնության գործադրման փաստն, իր էությամբ, արդեն իսկ վտանգավոր է մարդու կյանքի և առողջության համար:

Ընդհանրացնելով իրավաբանական գրականության մեջ ավազակության և կողոպուտի հանցակազմերի միավորման խնդրի շուրջ առկա հիմնավորումները և այն, որ նշված հանցակազմերի միավորումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քր. օր.-ի և նրա հետագա կատարելագործման համար, ինչպես նաև նկատի ունենալով այս հարցի շուրջ տարբեր երկրների քրեական օրենսդրությունների ունեցած պրակտիկան, առաջարկվում է՝ միավորել ավազակության և բռնությամբ

գուգորդված կողոպուտի հանցակազմերը և ստեղծել *ավագակության միասնական հանցակազմ*, իսկ կողոպուտի հանցակազմի հասարակ տեսակը, որպես գույքի բացահայտ հափշտակության դրսևորում, ընդգրկել գողության հանցակազմում: Շորթման հանցակազմը դիտել որպես հափշտակության *հավասարագոր և ինքնուրույն եղանակ*, իսկ հանցակազմի պարտադիր հատկանիշներից մեկը հանդիսացող գույքային բնույթի գործողությունների կատարման պահանջը, առանձին քրեաիրավական նորմով, նախատեսել «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում: Ատենախոսը առաջարկում է նաև «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ համապատասխան ծանոթագրության կամ առանձին հոդվածի տեսքով, սահմանել հափշտակության առարկայի՝ «գույքի», ինչպես նաև՝ «շինության», «պահեստարանի», որոշակի խմբագրմամբ նաև՝ «բնակարանի», և «տեխնիկական միջոցների» քրեաիրավական հասկացությունները: Միաժամանակ առաջարկվում է, որպեսզի տեխնիկական միջոցների գործադրման հատկանիշը, որպես հափշտակության հանցակազմերում արարքի հանրային վտանգավորությունը բարձրացնող հատկանիշ, ընդգրկվի ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ ավագակության և գողության հոդվածներում՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ: Հափշտակության առանձին եղանակների ուսումնասիրության շրջանակներում ատենախոսի կողմից կատարվել են նաև մի շարք այլ առաջարկություններ, որոնք իրենց արտացոլումն են գտել ատենախոսության հիմնական եզրահանգումներում:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Հափշտակությունների առանձին տեսակների քրեաիրավական ընդհանուր բնութագիրն ու որակման առանձնահատկությունները» պարագրաֆում ատենախոսի կողմից ուսումնասիրության են ենթարկվում առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակության և համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակության հանցակազմերը: Նշված հանցակազմերի էությունը կայանում է նրանում, որ դրանք հանդես չեն գալիս որպես հափշտակության առանձին եղանակներ և դրանց դիսպոզիցիաներում որևէ կերպ չեն պարզաբանվում, թե նշված արարքները հափշտակության կոնկրետ որ եղանակով են կատարվում, այսինքն՝ դրանք կարելի է մեկնաբանել որպես գույքի հափշտակության *առանձին տեսակներ՝ «անկախ հափշտակության կատարման եղանակից»*: Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, որ գույքի հափշտակությունը կարող է կատարվել ցանկացած այնպիսի մի եղանակով, որը բացարձակ հայտնի չէ ՀՀ քր. օր.-ին:

Առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակության (ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդված) հանցակազմի, որպես հափշտակության նոր տեսակի, հիմնական **անմիջական օբյեկտը** սեփականության կոնկրետ ձևն է՝ պետական, համայնքային, անձնական կամ հասարակական կազմակերպությունների սեփականությունը: Գույքը բռնի կերպով վերցնելու դեպքերում, որպես հանցագործության ոչ պարտադիր օբյեկտ, կարող է հանդիսանալ նաև անձի առողջությունը:

Հափշտակության տվյալ տեսակի հասարակական վտանգավորությունը բնութագրվում է ոչ թե հափշտակված առարկայի արժեքով, այլ վերջինիս *առանձնակի արժեքով*: Այդ իսկ պատճառով, հանցագործության առարկայի տվյալ

հատկանիշը կազմում է հանցագործության հիմնական բովանդակությունը: Օրենքն այն բնորոշում է իբրև «առարկաներ և փաստաթղթեր»:

Հանցագործության օբյեկտիվ կողմն ընդգրկում է գույքը վերցնելուն ուղղված ցանկացած եղանակ, որի պարագայում ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդվածով նախատեսված արարքը լրացուցիչ որակել հափշտակության առանձին եղանակների կամ շորթման համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներով, չի պահանջվում:

Ատենախոսության մեջ առանձնակի քննադատության են արժանացել առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակության հանցակազմի բովանդակության, ինչպես նաև ծանրացուցիչ հանգամանքներում առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու համար նախատեսվող պատժի վերաբերյալ հարցերը, ինչի կապակցությամբ կատարվել են օրենսդրական նոր առաջարկություններ, մասնավորապես՝ առաջարկվել է ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդվածի դիսպոզիցիան խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ *«Մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր հափշտակելը»*, իսկ նշված հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի համար սահմանել ավելի մեղմ պատիժ:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության (ՀՀ քր. օր.-ի 181-րդ հոդված) հանցակազմը նույնպես հափշտակության բոլորովին նոր տեսակ է:

Սկզբնական շրջանում համակարգիչները (որոնց անվանում էին «ԷՀՄ»-ներ՝ էլեկտրոնային հաշվողական մեքենաներ) ծառայել են միայն մաթեմատիկական հաշվարկներ կատարելու համար: Սակայն աստիճանաբար դրանք վերածվեցին մարդու կողմից օգտագործվող ցանկացած տեսակի տեղեկությունների մշակման համապարփակ միջոցի: Ներկայումս դրանք օգտագործվում են մարդկային գործունեության գրեթե բոլոր բնագավառներում: Դրանց օգնությամբ կառավարվում են երկրներ, բանկեր, ձեռնարկություններ և այլն: Սակայն նոր տեխնոլոգիաների ներմուծումն առաջ բերեց նաև հանրության համար վտանգավոր արարքների նոր դրսևորումներ՝ համակարգչային հանցագործություններ: Մասնավորապես մեծ տարածում ստացան, այսպես կոչված, *համակարգչային հափշտակությունները*:

«Համակարգչային հանցագործություններ» եզրույթն առաջին անգամ արտասահմանյան գրականության մեջ սկսեց օգտագործվել այն ժամանակ, երբ սկսեցին հայտնաբերել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգտագործմամբ կատարվող հանցագործությունները: Քրեաիրավական տեսանկյունից համակարգչային հանցագործությունը, որպես հասկացություն, գոյություն ունի միայն այն պետություններում, որոնք ունեն տվյալ բնագավառին վերաբերող օրենսդրություն: Օրինակ՝ 1984թ. ԳՖՀ-ում ընդունվեց օրենք, որում տրված է համակարգչային հանցագործությունների հասկացությունը, կապված այն ապօրինի գործողությունների կատարման հետ, որոնց դեպքում տվյալների էլեկտրոնային մշակումը հանդես է գալիս որպես այդ գործողությունների կատարման գործիք կամ հանցավոր ոտնձգության օբյեկտ:

Համակարգչային տեղեկատվության ոլորտում կատարված հանցագործությունների զգալի մասը, ինչպես ցույց է տվել արտասահմանյան

երկրների պրակտիկան, իրականացվում է բանկային համակարգերի էլեկտրոնային ոչ կանխիկ հաշիվներում, որտեղ համակարգիչն օգտագործվում է տվյալների բազա ապօրինի մուտք գործելու և ֆինանսական բնույթի ապօրինի գործառնություններ իրականացնելու նպատակով ու զուգորդվում է կանխիկ դրամական միջոցները դուրս բերելու և դրանք յուրացնելու հետ կապված գործողությունների իրականացման հետ:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության հիմնական օբյեկտը սեփականությունն է, իսկ լրացուցիչ օբյեկտը՝ համակարգչային տեղեկատվության անվտանգությունը:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը կարող է արտահայտվել քրեական իրավունքին հայտնի հափշտակության որևէ եղանակով: Դրա մասին է վկայում քրեաիրավական նորմի բովանդակությունը, որտեղ օրենսդիրը հանցագործությունը հափշտակության որևէ եղանակով դրսևորվելու մասին ուղղակի որևէ նշում չի կատարում: Համակարգչային տեխնիկան, ուրիշի գույքը հափշտակելու ժամանակ, հանդես է գալիս որպես հանցագործության գործիք:

Ատենախոսը նաև նշում է, որ ներկայիս գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում, քրեական օրենսդրությունը չի կարող անընդհատ հետևել և օպերատիվ կերպով արձագանքել օրեցօր զարգացող այդ բնագավառի յուրաքանչյուր նվաճմանը, ինչի հետևանքով բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող և հանրային վտանգավորություն ներկայացնող հակաօրինական գործողությունների որոշակի արդիական դրսևորումներ, ինչպիսիք են՝ **«ֆրիկերությունը»** և **«ռադիոհեռությունը»**, դեռևս իրենց քրեաիրավական գնահատականը չեն ստացել:

Վերոգրյալի հիման վրա՝ ուսումնասիրելով նաև որոշ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների պրակտիկան, ատենախոսության մեջ կատարվել են օրենսդրական առաջարկություններ: Մասնավորապես՝ առաջարկվել է վերացնել համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմը (հոդված 181-րդ), իսկ դրա փոխարեն ավագակության, զոդության, խարդախության և յուրացնելու կամ վատնելու հանցակազմերում ավելացնել արարքը որակյալ դարձնող հետևյալ հատկանիշը՝ *«...որը կատարվել է համակարգչային տեղեկատվության համակարգ ապօրինի (չարտոնված) մուտք գործելով»*: Դրա հետ մեկտեղ, ատենախոսը առաջարկել է ՀՀ քր. օր.-ում՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, նախատեսել քրեաիրավական նորմեր այնպիսի հանցավոր ոտնձգությունների համար, ինչպիսիք են՝ **«ֆրիկերությունը»** և **«ռադիոհեռությունը»**, ընդ որում՝ պատասխանատվությունը նախատեսել ոչ թե հանրորեն վտանգավոր հետևանքների, այլ այն փաստացի արարքների համար, որոնք կարող են վնաս պատճառել ինչպես ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի, այնպես էլ՝ պետությանը:

Ատենախոսության հիմնական եզրահանգումները:

1) ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, առանձին ծանոթագրության տեսքով, սահմանել **«հափշտակություն»** հասկացությունը՝ հետևյալ ձևակերպմամբ.

«Մույն օրենսգրքի հոդվածներում հափշտակություն ասելով հասկացվում է՝ հանցավորի կողմից ուրիշին (սեփականատիրոջը կամ գույքի օրինական տիրապետողին) պատկանող գույքը շահադիտական նպատակով, սպորինի, անհատույց վերցնելը և (կամ) այն իրենը կամ այլ անձինը դարձնելը, եթե նա իրական հնարավորություն է ունեցել իր հայեցողությամբ այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու»:

2) ՀՀ քր. օր.-ում նախատեսել հափշտակություններին վերաբերող առանձին գլուխ, որն իր մեջ կներառի ՀՀ քր. օր.-ի տարբեր գլուխներում ընդգրկված հափշտակության հատկանիշներ պարունակող բոլոր հանցակազմերը: Նշված հանգամանքը հնարավորություն կտա հափշտակության բոլոր հանցակազմերը մեկտեղելով՝ առավել մատչելի դարձնել ինչպես տվյալ գլխում ընդգրկված հափշտակության առանձին հանցակազմերի կիրառական նշանակությունը, հափշտակությունների որակման հետ կապված հարցերը, հափշտակությունների հստակ տարանջատումն այլ նմանատիպ հանցագործություններից, այնպես էլ՝ նշված հանցակազմերի նկատմամբ առավել համակարգված մոտեցում ապահովելը՝ միաժամանակ չխախտելով հափշտակության յուրաքանչյուր հանցակազմի դերը և նշանակությունը ՀՀ քր. օր.-ում:

3) Խարդախության հանցակազմում *«կաշառք ստանալու պատրվակով»* հատկանիշի առկայությունը (ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-դ մասի 5-րդ կետ), որը հատվում է նաև մույն հանցակազմում նախատեսված *«պաշտոնեական դիրքն օգտագործելով»* հատկանիշի հետ, բավարար չափով պատճառաբանված ու նպատակային չէ և նշված հանցակազմում այդպիսի արարքի լրացուցիչ նախատեսումը բազմակողմանի և լուրջ վերլուծության կարիք ունի: Պետք է փաստել, որ օրենքն այս առումով թերի է, ոչ ճիշտ և լրացուցիչ օրենսդրական կատարելագործման կարիք ունի: Ելնելով օրենսդիրի կողմից սահմանած խարդախության հանցակազմի տրամաբանական կառուցվածքից, թերևս, խարդախության հանցակազմի *«կաշառք ստանալու պատրվակով»* հատկանիշը պետք է նշված հանցակազմից ընդհանրապես վերացնել:

4) Շորթման հանցակազմն ամբողջությամբ ընդգրկել հափշտակությունների մեջ՝ որպես հափշտակության *հավասարազոր և ինքնուրույն եղանակ*, իսկ գույքային բնույթի գործողությունների կատարման պահանջը, որը համարվում է շորթման հանցակազմի պարտադիր հատկանիշներից մեկը, դիտել որպես առանձին հանցագործություն՝ դրա համար նախատեսելով առանձին քրեաիրավական նորմ՝ *«Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»* գլխում:

5) *«Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»* գլխում՝ համապատասխան ծանոթագրության կամ առանձին հոդվածի տեսքով, սահմանել հափշտակության առարկայի՝ «գույքի», ինչպես նաև՝ «շինության», «պահեստարանի», որոշակի խմբագրմամբ նաև՝ «բնակարանի», և «տեխնիկական միջոցների» քրեաիրավական հասկացությունները:

6) *«Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու կամ իրացնելու»* համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քր. օր.-ի 216-րդ հոդվածը, որը նախատեսված է «Տնտեսական գործունեության դեմ ուղղված

հանցագործություններ» գլխում և որևէ կերպ կապված չէ տնտեսության իրավաչափ գործունեության հետ ու առավել մոտ է հափշտակությանը՝ ընդգրկել «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ առանձին հոդվածի տեսքով:

7) Համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում ընդգրկված ավագակության (ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդված) և բռնությամբ զուգորդված կողոպուտի (ՀՀ քր. օր.-ի 176-րդ հոդված) հանցակազմերը միավորելով՝ ստեղծել *ավագակության միասնական հանցակազմ*, իսկ ավագակության հանցակազմը բնորոշող օրենսդրական սահմանումը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. *«Ավագակությունը՝ ուրիշի գույքի հափշտակությունն է, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով»*: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նմանատիպ բնորոշման արդյունքում ավագակության հանցակազմից դուրս է մնում կողոպուտի հասարակ տեսակը, այն է՝ *ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը*, ուստի *առաջարկվում է՝* կողոպուտի հանցակազմի հասարակ տեսակը ընդգրկել գողության հանցակազմում (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդված) և այն բնորոշել հետևյալ բովանդակությամբ՝ *«Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի կամ բացահայտ հափշտակությունը, որը կատարվել է մանր չափերով...»*:

8) ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի (ավագակություն) 4-րդ մասի ծանոթագրության մեջ, որը վերաբերում է նաև հանցագործությամբ պատճառված վնասի չափերին, ավելացնել հետևյալ նախադասությունը՝ *«... բացի հանցագործությամբ պատճառված վնասից, կարող են հաշվի առնվել նաև գործի այլ էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ անձի ֆինանսական կամ նյութական դրությունը, անձի համար հափշտակված գույքի նշանակությունը»*:

9) Տեխնիկական միջոցների գործադրման հատկանիշը, որպես հափշտակության հանցակազմերում արարքի հանրային վտանգավորությունը բարձրացնող հատկանիշ, ընդգրկել ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ ավագակության և գողության հոդվածներում՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ:

10) ՀՀ քր. օր.-ում՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, նախատեսել քրեաիրավական նորմեր այնպիսի հանցավոր ոտնձգությունների համար, ինչպիսիք են՝ *«Ֆրիկերությունը»* և *«ռադիոհեռությունը»*, ընդ որում՝ պատասխանատվությունը նախատեսել ոչ թե հանրորեն վտանգավոր հետևանքների, այլ այն փաստացի արարքների համար, որոնք կարող են վնաս պատճառել ինչպես ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի, այնպես էլ՝ պետությանը:

11) ՀՀ քր. օր.-ից վերացնել համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմը (հոդված 181-րդ), իսկ դրա փոխարեն խարդախության, գողության և յուրացնելու կամ վատնելու հանցակազմերում ավելացնել արարքը որակյալ դարձնող

հետևյալ հատկանիշը՝ «...որը կատարվել է համակարգչային տեղեկատվության համակարգ սպորինի (չարտոնված) մուտք գործելով»:

12) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սպառիչ թվարկված են պատմական, գեղարվեստական և մշակութային այլ արժեքների տեսակները, ուստի քրեաիրավական առումով ավելորդ է ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդվածում «պատմական և գեղարվեստական արժեքներ» հասկացությունները տարանջատել «մշակութային արժեքներ» հասկացությունից, քանի որ բոլորը միասին հանդես են գալիս որպես մեկ հասկացություն՝ *մշակութային արժեքներ*: Ուստի, օրենսդրական առումով, ավելի նպատակահարմար կլիներ, եթե ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդվածը ենթարկվեր համապատասխան խմբագրման: Այս առումով առաջարկվում է՝ ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդվածի դիսպոզիցիան խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր հափշտակելը», իսկ նշված հոդվածի 3-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը, որն ավելի խիստ պատիժ է նախատեսում (*ազատազրկում՝ յոթից տասներկու տարի ժամկետով*), քան անձի դեմ ուղղված մի շարք հանցագործությունների համար (*օրինակ՝ 112-րդ հոդվածի 2-րդ մաս, 131-րդ հոդվածի 3-րդ մաս և այլն*), մեղմացնել և սահմանել ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. *Ասլանյան Ա.Վ.*, «Հափշտակություն» հասկացության բնորոշումը, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական գիտական հանդես №79-80, 2003թ., Երևան, էջ 21-22, 27,

2. *Ասլանյան Ա.Վ.*, Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական գիտական հանդես № 85-86, 2003թ., Երևան, 20-22 էջ, շարունակությունը՝ «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական գիտական հանդես №87-88, 2004թ., Երևան, էջ 15-17,

3. *Ասլանյան Ա.Վ.*, Հափշտակության օբյեկտի հասկացությունը, «Օրինականություն» ՀՀ Գլխավոր դատախազության գիտագործնական եռամսյա տեղեկագիր № 28, 2004թ., Երևան, էջ 42-47,

4. *Ասլանյան Ա.Վ.*, Համակարգչային հափշտակությունների համառոտ քրեաիրավական բնութագիրը, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական գիտական հանդես № 124, 2006թ., Երևան, էջ 16-17,

5. *Ասլանյան Ա.Վ.*, Հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմը, «Արդարադատություն» գիտական հանդես №2, 2010թ., Երևան, էջ 35-42,

6. *Ասլանյան Ա.Վ.*, Հափշտակության հանցակազմի սուբյեկտիվ կողմը, «Արդարադատություն» գիտական հանդես №3, 2010թ., Երևան, էջ 55-59:

РЕЗЮМЕ

Как известно, Уголовный кодекс РА 1961г. в своей структуре представлял определенные сложности в вопросах осуществляемых уголовно-правовой классификации и оценки таких преступлений, как “хищения”. Несмотря на то обстоятельство, что действующий Уголовный кодекс РА (1995г. - 2002г.) попытался по новому решить вопросы уголовной ответственности, связанные с хищением имущества, особенности их квалификации, включил в себя такие новые виды преступлений направленных против собственности, как хищения предметов, имеющих особую ценность (ст. 180 УК РА), хищения, совершенные с использованием компьютерной техники (ст. 181 УК РА) и др., совершил новую систематизацию уголовно-правовых норм преступлений, направленных против собственности, некоторые изменения и переформулировки диспозиционного содержания норм, изменения структурных особенностей мер и видов наказаний, однако при всем этом, в УК РА все еще есть проблемы, которые нуждаются в научно обоснованных разъяснениях и анализах. Указанное обстоятельство обусловлено тем, что применение уголовно-правовых норм на практике иногда вызывает определенные сложности и возникает потребность, чтобы применение последних сопровождалось наиболее актуальными научными подходами в теории уголовного права. На протяжении последних лет ряд проблем, связанных с хищением, был по мере возможности освещен криминалистами, несмотря на то обстоятельство, что в судебной практике все еще встречаются сложности и разногласия, связанные с неверной квалификацией хищений и их разграничением от подобных преступлений.

В настоящее время, в отличие от прошлых лет, накоплен сравнительно большой опыт в вопросе непосредственного применения уголовно-правовых норм, предусматривающих ответственность за хищения. Это имеет большое значение, поскольку используя опыт применения уголовного права и полученные достижения, делается попытка по возможности наиболее глубоко подвергнуть разъяснению содержание и юридическое значение норм уголовного законодательства, предусматривающих уголовную ответственность за соответствующие виды преступления.

Основываясь на судебной практике разных времен и основных положениях теории уголовного права, в диссертации представлены: понятие преступлений, направленных против собственности, различные уголовно-правовые характеристики хищений, элементы и признаки состава хищения, способы, виды хищений, их законодательные формулировки, соответствующие законодательные анализы предыдущих уголовных законодательств и действующего уголовного законодательства, законодательное разграничение хищений и таких смежных преступлений, которые несмотря на то, что содержат в себе признаки хищения, тем не

менее находятся под защитой иных уголовно-правовых норм, а также различные сопоставления квалификаций хищений, точного применения уголовного законодательства.

Бесспорно, что ряд вопросов, связанных с темой, стали предметом для бурного обсуждения в теории уголовного права и получили разнообразные толкования. Вопрос, относящийся к хищениям и особенностям его квалификации, все еще не был подвергнут комплексному обсуждению в Российской Федерации, несмотря на то, что в разное время, разные авторы посвящали этому вопросу отдельные научные исследования. Тем не менее, были претворены в жизнь некоторые уголовно-правовые, в особенности, законодательные решения, связанные с вопросами, относящимися к хищениям в УК РФ, а также с различными законодательными инициативами, относящимися к данной теме.

Научным новшеством диссертации является то, что она впервые в РФ, где была сделана попытка раскрыть сущность "хищения" как уголовно-правового понятия; понятие хищения, характеризующие его признаки были подвергнуты всестороннему изучению и анализу.

Основная цель работы – исследование основных положений, связанных с понятием хищения и его юридической квалификацией – на основании мнений различных авторов, разнородных точек зрения, нашедших место в юридической литературе, а также на основании анализа отечественной и зарубежной судебной практики. В частности, автор поставил перед собой цель, сопоставляя УК РФ с кодексами ряда других стран, а также используя научную литературу и накопленный опыт, выявить недочеты в делах, относящихся к хищениям и выступить с законодательными предложениями, что в свою очередь даст возможность максимально достичь судебной практики по делам хищения и четкого и многостороннего регулирования законодательства, относящегося к преступлениям, направленным против собственности.

А понятие хищения, в многостороннему исследованию и анализу подвергнуты те характерные качества, конкретные способы, виды хищений, подняты общности и различия, существующие между ними, что в свою очередь содействовало решению ряда новых проблем. Ряд проблем, относящихся к теме диссертации по новому переосмыслены и основательно доработаны, по отношению к ним были предложены принципиально новые подходы.

Обобщая достижения теории уголовного права и судебной практики, в настоящей работе были разработаны предложения, которые могут иметь важное значение для характеристики хищений, признаков состава преступления хищения и особенностей их квалификации, разъяснения, анализа вопросов, связанных с правильной квалификацией хищения, а также для совершенствования отдельных положений УК РФ.

SUMMARY

As is well known, RA Criminal Code of 1961 by its structure presented certain complications in the issues of criminal-legal qualification and the estimation of such crimes as “*thefts*”. Despite the fact that the acting RA Criminal Code made an attempt to solve the issues of criminal responsibility concerned with the theft of the property, the peculiarities of the qualification in a new way, included new types of crimes against property, such as the thefts of the goods of special value (Article 180), thefts with using computer equipment (Article 181) etc., made a new systematization for penal norms of the crimes against property, some changes and reformulations of the provisional content of the norms, the change of structural peculiarities of the norms of punishment measures and types, but with all this going on, there are still problems in RA Criminal Code, which need scientifically grounded explanations and analyses. The circumstance mentioned rides on the fact that sometimes the application of penal norms in practice arises certain complications and the necessity appears for the accompaniment by the most actual scientific approaches in the theory of criminal law. During last years, a series of problems, concerned with the theft, as far as possible were covered by criminalists, in spite of the fact that in the court practice there are still complications and difficulties concerned with the wrong qualifications of thefts and their differentiation from similar crimes.

In present unlike the past years, relatively large experience has been collected in the issues of the immediate application of penal norms, which stipulate for the responsibility for thefts. This is of great significance, because using the experience of criminal law application and the achievements gained, a try has been made to comment as far as possible the content and the juridical significance of the norms for criminal legislation, providing criminal liability for the corresponding kinds of crime.

Springing up from the judicial opinion of different times and the base statements of criminal law theory, the following are presented in the dissertation: *the concept of crimes against property, different penal characteristics of thefts, the elements and signs of corpus delicti for thefts, the methods, kinds of thefts, their legal formulations, corresponding legislative analyses of the previous criminal legislations and the acting criminal legislation, the legislative separation of thefts and such kind of adjacent crimes, which in spite of the fact that they contain the signs of thefts, nevertheless are under the aegis of other penal norms, as well as different comparisons of the qualifications of thefts, the strict application of criminal legislation. The specials frameworks of the matters concerned cause the urgency of the theme studied.*

There is no doubt that series questions concerned with the theme became a subject for a violent discussion in the theory of criminal law and received different comments. The issue concerned with the thefts and the peculiarities of their qualification, still hasn't been subjected to the complex discussion in RA, despite the fact that in different time different

authors devoted special scientific studies to this matter. Nevertheless, some penal, especially legislative decisions have been put into practice. They were concerned with the issues related to thefts in RA Criminal Code, as well as with different legislative initiatives, concerned with that theme.

The scientific innovation of the dissertation is the fact that it is the first monograph in RA, in which an attempt to disclose the essence of “theft” as a penal concept has been made; the concept of theft, the signs characterizing it have been subjected to the comprehensive analyses.

The main objective of the work is the study of basic statements related to the concept of stealage and its political-juridical qualification – based on different authors’ opinions, different kinds of viewpoints found place in the juridical literature, as well as based on the analysis of domestic and foreign court practice. Particularly, the author set a purpose, comparing RA civil code with civil codes of other countries, as well as using scientific literature and the experience collected, disclose the gaps found in the cases related to thefts and submit legislative suggestions, which in its turn gives possibility to reach the increase of the court practice by the case of theft maximally and strict and multi-sided regulation of legislation, related to the crimes directed against property.

The concept of theft is underwent the multi-sided study and analysis, as well as those typical qualities, concrete ways, types of thefts, the character of each type of theft, the communities and differences between them, which in turn supported to the solving of series problems. Series problems related to the theme of dissertation are newly rethought and thoroughly finalized, principally new approaches towards them are suggested.

Taking as a base the fact that the tight cooperation between theory and practice in criminal law is an important guarantee for the study of each question that adopted principle has been applied during the disclosure of peculiarities of the qualification of thefts. In this work, summarizing the achievements of the theory of criminal law and jurisprudence, the proposals have been developed, which can have an important value for the description of thefts, signs of corpus delicti for thefts and the peculiarities of their qualification, explanations, analysis of issues concerned with the right qualification of theft, as well as for the improvement of the separate statements of RA Criminal Code.